Երևանի ավագանու

2018 թ. սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների

դիտորդական առաքելության

ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

2018

ԵՐԵՎԱՆ

«Ականատես» դիտորդական առաքելությունն իրականացվել է Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի բովանդակության համար պատասխանատու են «Ականատես» դիտորդական առաքելությունն ու դրա անդամ կազմակերպությունները, և այն չի արտացոլում դրամաշնորհատուի տեսակետները:

Դիտորդական առաքելության մասին

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ) և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) հասարակական կազմակերպությունների և «Ռեստարտ» քաղաքացիական նախաձեռնության կողմից: Առաքելության գործընկերն է Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը:

«Ականատես»-ը հիմնադրվել է 2018 թ.-ի օգոստոսին: Առաքելության նպատակն է նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրական գործընթացների օրինավորությանը և դրանց նկատմամբ հանրային վերահսկողությանը:

«Ականատես»-ը գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություններից, որոնք կարող են մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի), թեկնածուի օգտին կամ դեմ:

«Ականատես» դիտորդական առաքելությունն իր երախտիքի խոսքն է ուղղում ընտրությունների դիտարկման գործընթացում ներգրավված կարճաժամկետ դիտորդներին, տարածքային համակարգողներին, իրավաբաններին և օպերատորներին, որոնց ակտիվ մասնակցության և նվիրված աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ապահովել դիտորդական նախաձեռնության

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 5
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 6
1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 8
2. ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 10
2.1. Քվեարկության նախապատրաստում 10
2.2. Քվեարկության ընթացք 11
2.3 Քվեարկության արդյունքների ամփոփում 18
2.4 Էական խախտումներ և բողոքարկում 19
5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23
5.1 Ընտրողների ցուցակների ճշգրտում 23
5.2 Դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների իրավունքների ընդլայնում 23
5.3 Ընտրական հանձնաժողովների անդամների աշխատանքի որակի բարելավում 24
5.4 Քվեարկության գործընթացի բարելավում 24
5.5 Բողոքարկման գործընթացների արդյունավետության երաշխավորում 24
4. ՎԵՐՋԱԲԱՆ 26

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային Ժողով
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԹԻՀԿ	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
ԺԱԱ	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԸՕ	Ընտրական օրենսգիրք

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2018 թ.-ի սեպտեմբերի 23-ի Երևան քաղաքի ավագանու արտահերթ ընտրություններին «Ականատես» դիտորդական առաքելությունն իրականացրել է կարճաժամկետ դիտորդություն՝ գնահատելով քվեարկության օրվան առնչվող գործընթացների համապատասխանությունը ՀՀ ընտրական օրենսդրությանը և միջազգային չափանիշներին, ինչպես նաև հնարավոր ռիսկերը ազատ, թափանցիկ և մրցակցային ընտրություններ անցկացնելու տեսանկյունից:

Կարճաժամկետ դիտորդության նպատակով ներգրավվել է 155 դիտորդ,[1] որոնք տեղաբաշխվել են Երևանի բոլոր վարչական շրջանների թվով 80 տեղամասում, որը կազմում է Երևանի 475 տեղամասերի 15%-ը: Տեղամասերի ընտրությունն իրականացվել է պատահական և ներկայացուցչական ընտրանքի միջոցով: Առաջին անգամ Հայաստանում փորձարկվել է ընտրանքի վրա հիմնված դիտորդության (sample-based observation) մեթոդը, որը տալիս է վիճակագրորեն հիմնավոր տվյալներ ընտրությունների նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացների վերաբերյալ: Այս մեթոդի կիրառությունը հնարավորություն է ընձեռել ընտրական գործընթացների վերաբերյալ պատկերը ձևավորել ոչ միայն դիտարկված տեղամասերի, այլ ամբողջ քաղաքի մակարդակով:

Տեղամասերում ստատիկ դիտորդության հետ մեկտեղ քվեարկության օրը գործել է 2 շրջիկ խումբ, յուրաքանչյուրում՝ 3-ական մարդ, որոնք դիտարկել են ընտրանքից դուրս մնացած տեղամասերը, դրանց հարակից տարածքները, ինչպես նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական շտաբների մոտակայքը:

Քվեարկության ավարտից հետո՝ ժամը 20:00-ից մինչև սեպտեմբերի 24-ը առավոտյան ժամը 10:00-ն իրականացվել է գործընթացների դիտարկում երկու տարածքային ընտրական հանձնաժողովում՝ հետևելով տեղամասերից պարկերի ստացման և արդյունքների աղյուսակավորման ընթացքին:

«Ականատես» դիտորդական առաքելությունը գրանցել է 59 էական խախտում, որոնցից 11-ը տեղի են ունեցել քվեարկության նախապատրաստման փուլում, 45-ը՝ քվեարկության ընթացքում և 3-ը՝ քվեարկության արդյունքների ամփոփման ընթացում: Արձանագրված խախտումներից 36-ի դեպքում ընտրական հանձնաժողովը հրաժարվել է գրանցամատյանում գրանցել քվեարկության կարգի խախտումների վերաբերյալ դիտորդի գնահատականը:

Ամփոփելով քվեարկության օրվա դիտարկման արդյունքները՝ կարելի է արձանագրել, որ 2018թ. սեպտեմբերի 23-ի ընտրություններն ազատ և մրցակցային էին: Քվեարկության օրը տեղ գտած որոշ խախտումները չեն կրել զանգվածային ու համակարգային բնույթ, ինչով այս

[1] «Ականատես» դիտորդական առաքելության դիտորդները ներառել են ինչպես ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված դիտորդների, այնպես էլ՝ ՁԼՄ ներկայացուցիչների:

ընտրությունները էապես տարբերվել են 2017թ. մայիսին կայացած Երևանի ավագանու ընտրություններից:

Երկար տարիների ընթացքում առաջին անգամ ստեղծվել են պայմաններ ու այնպիսի միջավայր, որը հնարավորություն է տվել քաղաքացիներին առավել անկաշկանդ և անվախ լինել իրենց կամարտահայտման մեջ: Այդպիսով, կարելի է արձանագրել, որ Երևան քաղաքի ավագանին արտացոլում է քաղաքացիների իրական նախապատվությունները:

1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2018 թ.-ի սեպտեմբերի 23-ի Երևան քաղաքի ավագանու արտահերթ ընտրություններին «Ականատես» դիտորդական առաքելությունն իրականացրել է կարճաժամկետ դիտորդություն՝ գնահատելով քվեարկության օրվան առնչվող գործընթացների համապատասխանությունը ՀՀ ընտրական օրենսդրությանը և միջազգային չափանիշներին, ինչպես նաև հնարավոր ռիսկերը ազատ, թափանցիկ և մրցակցային ընտրություններ անցկացնելու տեսանկյունից:

Կարճաժամկետ դիտորդության նպատակով ներգրավվել է 155 դիտորդ,[2] որոնք տեղաբաշխվել են Երևանի բոլոր վարչական շրջանների թվով 80 տեղամասում, որը կազմում է Երևանի 475 տեղամասերի 15%-ը: Տեղամասերի ընտրությունն իրականացվել է պատահական և ներկայացուցչական ընտրանքի միջոցով: Առաջին անգամ Հայաստանում փորձարկվել է ընտրանքի վրա հիմնված դիտորդության (sample-based observation) մեթոդը, որը տալիս է վիճակագրորեն հիմնավոր տվյալներ ընտրությունների նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացների վերաբերյալ: Այս մեթոդի կիրառությունը հնարավորություն է ընձեռել ընտրական գործընթացների վերաբերյալ պատկերը ձևավորել ոչ միայն դիտարկված տեղամասերի, այլ ամբողջ քաղաքի մակարդակով:

«Ականատես»-ի դիտորդները տեղակայվել են ներկայացուցչական ընտրանքի միջոցով հատկացված տեղամասերում և դիտարկել քվեարկության ողջ օրվա ընթացքը՝ արձանագրելով իրենց դիտարկումները ստանդարտացված հարցաշարում և առաքելության համակարգող կենտրոն ներկայացնելով պարբերական հաղորդումներ քվեարկության նախապատրաստման, քվեարկության ընթացքի, տեղամասերի փակման և քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ: Հաղորդումները ներկայացվել են SMS հաղորդագրությունների կամ առցանց հարթակի միջոցով և ներառել են միայն դիտորդների անմիջական դիտարկման արդյունքները: Ի լրումն վիճակագրական տվյալների, համակարգող կենտրոնին տրամադրվել են տեղեկություններ էական խախտումներ պարունակող միջադեպերի վերաբերյալ:

Տեղամասերում ստատիկ դիտորդության հետ մեկտեղ քվեարկության օրը գործել է 2 շրջիկ խումբ, յուրաքանչյուրում՝ 3-ական մարդ, որոնք դիտարկել են ընտրանքից դուրս մնացած տեղամասերը, դրանց հարակից տարածքները, ինչպես նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական շտաբների մոտակայքը:

Քվեարկության ավարտից հետո՝ ժամը 20:00-ից մինչև սեպտեմբերի 24-ի առավոտյան ժամը 10:00-ն իրականացվել է գործընթացների դիտարկում երկու տարածքային ընտրական հանձնաժողովում՝ հետևելով տեղամասերից պարկերի ստացման և արդյունքների աղյուսակավորման ընթացքին:

---

[2] «Ականատես» դիտորդական առաքելության դիտորդները ներառել են ինչպես ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված դիտորդների, այնպես էլ՝ ՁԼՄ ներկայացուցիչների:

«Ականատես» դիտորդական նախաձեռնության դիտորդները Կենտրոնական ընտրական հանձնաժողովում (ԿԸՀ) հավատարմագրվել են ԹԻՀԿ և ԺԱԱ հասարակական կազմակերպությունների միջոցով: Դիտարկումների նպատակով ևս մեկ խումբ հավատարմագրվել է որպես ՁԼՄ ներկայացուցիչ www.asparez.am կայքից:

Քվեարկության օրը դիտորդական առաքելության համակարգման, իրավական խորհրդատվության և վերհանված խախտումների արձանագրման նպատակով գործել է համակարգող կենտրոն, որում քվեարկության օրը ներգրավվել են 15 օպերատոր և 15 իրավաբան:

Դիտորդների կողմից հավաքագրված տվյալները ենթարկվել են վերլուծության և ամփոփվել «Ականատես» դիտորդական առաքելության զեկույցներում, հայտարարություններում[3] և մամուլի հաղորդագրություններում:

Ընտրական գործընթացում արձանագրված էական խախտումների հիման վրա կազմվել և ներկայացվել են դիմում-բողոքներ վարչական մարմիններին, հայցադիմումներ՝ դատարաններ և հաղորդումներ՝ իրավապահ մարմիններին:

Դիտորդության վերաբերյալ ընթացիկ տեղեկատվությունը հրապարակվել է «Ականատես» դիտորդական առաքելության ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև անդամ կազմակերպությունների ինտերնետային կայքերում և/կամ ֆեյսբուքյան էջերում:

[3] *«Ականատես» դիտորդական առաքելության նախնական գնահատականը Երևան քաղաքի ավագանու ընտրությունների մասին (*Երևան, 2018 թ. սեպտեմբերի 24) https://transparency.am/hy/news/view/2479

2. ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ստորև բերված են «Ականատես» դիտորդական առաքելության դիտարկումների արդյունքները, որոնք վերաբերում են քվեարկության նախապատրաստմանը, քվեարկությանը և հետընտրական գործընթացներին:

2.1. Քվեարկության նախապատրաստում

Դիտարկված տեղամասերում քվեարկության նախապատրաստման նիստերը հիմնականում անցել են առանց էական խախտումների:

2.1.1 Տեղամասերի հասանելիություն

Արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են տեղամասային կենտրոնի հասանելիությանը: Տեղամասերի 41%-ը հասանելի չի եղել սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների համար:

2.1.2 Քվեարկության սենյակի կահավորում

Տեղամասերի 16%-ում դիտարկվել է քվեարկության սենյակի սխալ կահավորում, ինչը կարող էր խոչընդոտել քվեարկության գաղտնիությունը:

2.1.3 Կողմնակի անձանց ներկայություն

Տեղամասերի 4%-ում արձանագրվել են քվեարկության սենյակում կողմնակի անձանց ներկայության

2.1.4 Վիճակահանություն

Տեղամասերի 3%-ում դիտարկվել են վիճակահանության սահմանված կարգի հետ կապված խնդիրներ:

Քվեարկության նախապատրաստական փուլում, ընդհանուր առմամբ, արձանագրվել է 11 էական խախտում, որոնք ներկայացված են ստորև՝ ըստ տեսակների և վարչական շրջանների:

Պատկեր 1. Քվեարկության նախապատրաստման ընթացքում դիտարկված խնդիրները



Պատկեր 2. Սխալ կահավորման և տեղամասի անհասանելիությանն առնչվող խախտումները



2.2. Քվեարկության ընթացք

Արձանագրված խնդիրների հիմնական մասը բաժին է ընկնում քվեարկության ընթացքին: Չնայած դիտորդների կողմից չեն արձանագրվել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էական ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա՝ այնուամենայնիվ, չափազանց կարևոր են դրանց լուծմանն ու հետագա կանխարգելմանն ուղղված քայլերը: Ամեն դեպքում, կարևոր է արձանագրել, որ նախկին ընտրական գործընթացներում արձանագրված համակարգային և զանգվածային բնույթ կրող խախտումները (ինչպիսիք են, օրինակ՝ զանգվածային կուտակումները տեղամասային կենտրոնների տարածքում, ոստիկանության անգործությունը, հանրային տրանսպորտով մարդկանց տեղամասեր բերել/տանելը, բռնությունը, դիտորդի, ՁԼՄ ներկայացուցչի իրավունքների խոչընդոտումը և այլն) Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում կամ բացակայում էին, կամ շատ փոքրաթիվ էին: Դիտարկված տեղամասերում արձանագրված խախտումները շատ դեպքերում հանդիսանում էին դրվագային և պայմանավորված էին քվեարկության ընթացակարգերի վերաբերյալ տեղամասային հանձնաժողովների անդամների թույլ գիտելիքներով և/կամ անգործությամբ:

Ընդհանուր առմամբ քվեարկության փուլում գրանցվել է 45 էական խախտում, որոնցից 26-ը չեն գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:[4]

[4] ՀՀ Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն, եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

2.2.1 Բռնություն, սպառնալիք կամ իրավունքների խոչընդոտում

Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի «դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, այցելուի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի (իրավունք չունեն) դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, այցելուին դուրս հանելու տեղամասային կենտրոնից կամ որևէ այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց», բացառությամբ դեպքերի, երբ ակնհայտորեն խաթարվում է քվեարկության ընթացքը:[5]

Դիտորդության ընթացքում գրանցվել է բռնության, սպառնալիքի կամ իրավունքների խոչընդոտման 10 դեպք թվով 5 տեղամասում, որից 8-ը Նոր Նորքի 2 տեղամասերում և Կենտրոնի 1 տեղամասում:

Դիտարկված տեղամասերից մեկում հանձնաժողովը նիստ է հրավիրել և քվեարկությամբ որոշել դիտորդներին հեռացնել տեղամասից քվեարկության բնականոն ընթացքը խաթարելու պատճառաբանությամբ: Այնուամենայնիվ, տարածքային և կենտրոնական ընտրական հանձնաժողովների անմիջական ցուցումների արդյունքում հանձնաժողովը վերացրել է իր որոշումը և դիտորդներին վերադարձրել քվեարկության սենյակ:

Մեկ այլ տեղամասում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձը չի կրել վկայականը և սպառնացել է այդ կապակցությամբ իրեն դիտողություն արած դիտորդին՝ կոտրել ակնոցը: Հանձնաժողովի նախագահը դուրս է հրավիրել նրան քվեարկության սենյակից: Վերջինս որոշ ժամանակ անց հեռացել է տեղամասից:

2.2.2 Ընտրողի անվան դիմաց ստորագրության առկայություն

Քվեարկության ընթացքում գրանցվել է ընտրողների ցուցակներում այլ անձի ստորագրության 26 դեպք՝ 19 տեղամասերում, որոնցից 8-ը (31%) Արաբկիրի 5 տեղամասերում, ինչպես նաև 4-ական (15%) և 3-ական դեպք (12%) համապատասխանաբար Շենգավիթի 3 և Դավթաշենի 1 տեղամասերում:

Թվով 2 տեղամասում արձանագրվել է 5 դեպք, երբ ընտրողները հայտնաբերել են, որ ընտրողների ցուցակում իրենց անվան դիմաց առկա է եղել այլ անձի ստորագրություն: Բոլոր ընտրողներին հնարավորություն է տրվել քվեարկել՝ ստորագրելով «այլ նշումներ» բաժնում: Հայտնաբերված դեպքերի վերաբերյալ տեղամասային հանձնաժողովները մերժել են դիտորդի գնահատականը մատյանում գրանցելու պահանջը: Դիտարկված բոլոր տեղամասերում գրանցվել է միայն մի դեպք Արաբկիրի տեղամասում, երբ ընտրողին չի թույլատրվել քվեարկել ընտրողների ցուցակում ստորագրություն լինելու պատճառով:

[5] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 32, մաս 5

2.2.3 Ընտրողների գրանցում

Ի տարբերություն տեխնիկական սարքի խափանման՝ բավականին մեծ թիվ են կազմել ընտրողների գրանցման հետ կապված խնդիրները (սարքը չի կարդացել մատնահետքը, անձը հաստատող փաստաթուղթը, չքվեարկած ընտրողին ճանաչել է որպես կրկնաքվեարկող): Ընդհանուր առմամբ տեխնիկական սարքի խափանման 705 դեպք է գրանցվել 41 տեղամասում, որոնցից 176-ը Երեբունի վարչական շրջանում դիտարկվող 4 տեղամասերում:

Պատկեր 3. Ընտրողների գրանցման հետ կապված խնդիրների քանակը



Պատկեր 4. Ընտրողների ցուցակում կամ սարքում ընտրողների անունների բացակայության դեպքերի և տեղամասերի քանակը



Արաբկիրի թվով 6 տեղամասում և Նոր Նորքի թվով 5 տեղամասում գրանցվել է նմանատիպ համապատասխանաբար 49 և 46 դեպք: Ընտրողների անունների բացակայության դեպքերի 16%-ն էլ գրանցվել է Կենտրոնի թվով 7 տեղամասերում:

Ընդհանուր առմամբ, քվեարկության դիտարկման ընթացքում գրանցվել են նաև ընտրողների ցուցակում կամ սարքում ընտրողների անունների բացակայության 232 դեպք՝ 47 (59%) տեղամասում:

2.2.4 Քվեարկության գաղտնիության ապահովում

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ քվեարկությունը գաղտնի է:[6] Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է: Բացի դրանից արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկել:[7]

Դիտարկվել է քվեարկության գաղտնիության խախտման 35 դեպք 17 տեղամասերում՝ դիտարկված տեղամասերի 21.25%-ում: Ընդհանուր առմամբ խախտում գրանցած տեղամասերի թվով աչքի են ընկել Մալաթիա-Սեբաստիան և Նոր Նորքը: Բոլոր դեպքերում խախտումը տեղի է ունեցել ընտրող տարեց անձանց կողմից, ովքեր քվեախցիկից դուրս գալով և չկարողանալով քվեաթերթիկը տեղադրել ծրարի մեջ՝ ցուցադրել են քվեաթերթիկները: Հանձնաժողովի նախագահը ընդամենը հորդորել է դադարեցնել նմանատիպ գործողությունները և որևէ այլ գործողություն չի ձեռնարկել:

Պատկեր 5. Քվեարկության գաղտնիության խախտման դեպքերի և տեղամասերի քանակը



Տեղամասերից մեկում քվեարկողը լուսանկարել է իր քվեաթերթիկը քվեախցիկում: Դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին՝ պահանջելով արձանագրել իր գնահատականը գրանցամատյանում, սակայն նախագահը ի սկզբանե հրաժարվել է գրանցել խախտումը՝ պատճառաբանելով, որ իր պահանջով ընտրողը ջնջել է լուսանկարը: Միայն դիտորդի կողմից խախտման վերաբերյալ գրավոր արձանագրություն կազմելուց հետո հանձնաժողովի նախագահը գրանցել է խախտման վերաբերյալ դիտորդի գնահատականը գրանցամատյանում:

[6] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 6
[7] Նույնը, հոդված 67, կետ 6

Մեկ այլ տեղամասում դիտորդը նկատել է, որ քվեախցիկում ընտրողը լուսանկարում է քվեաթերթիկը: Մինչև հանձնաժողովի նախագահին տեղեկացնելը տվյալ ընտրողը հեռացել է տեղամասից: Դեպքն արձանագրվել է գրանցամատյանում:

1 տեղամասում տեղամասի բացումից հետո մոտ 30 ծրարի վրա դրվել է կնիք քվեատուփի և դրոշմանիշների համար պատասխանատու հանձնաժողովի անդամի կողմից: Սկզբում հանձնաժողովի նախագահը հրաժարվել է արձանագրել խախտումը գրանցամատյանում՝ պատճառաբանելով, որ այդ հարցը կդնեն քվեարկության և հանձնաժողովը որոշում կկայացնի վավեր կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ, սակայն դիտորդի պնդումներից հետո, այնուամենայնիվ, նա գրանցել է խախտումը:

Մի քանի տեղամասերում դիտորդների կողմից արձանագրվել են դեպքեր, երբ ընտրողները բարձրաձայնել են, թե ում օգտին են քվեարկել: Մի դեպքում ընտրողը պատահաբար ցույց է տվել քվեաթերթիկը, որից հետո հանձնաժողովի անդամը մարել է այն և ընտրողին տրամադրել նոր քվեաթերթիկ:

Գրանցվել են դեպքեր, երբ քվեախցիկների տեղակայությունը առաջացրել է քվեարկության գաղտնիության խնդիրներ, մասնավորապես քվեախցիկի հետևում գտնվող դռների վերևում առկա են եղել պատուհաններ, վարագույր (պատի փոխարեն), բացվող դուռ, որից դուրս ու ներս են արել հանձնաժողովի անդամները: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է փակել դուռը (պատճառաբանելով սենյակի անհրաժեշտությամբ), փոխարենը հանել այդ՝ թվով 3-րդ, քվեախցիկը:

2.2.5 Ընտրողների ուղղորդում

Ընտրողների ուղղորդման հետ կապված «Ականատես»-ի դիտորդները գրանցել են 18 դեպք թվով 8 տեղամասում՝ դիտարկված տեղամասերի 10%-ում: Հատկանշական է, որ ուղղորդման կարգի խախտման մասով ամենաշատ խնդիրները արձանագրվել են Երեբունի (7 դեպք) և Նուբարաշեն (5 դեպք) վարչական շրջաններում: Երկու տեղամասերում դիտորդներն արձանագրել են ընտրողների ուղղորդման դեպքեր «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձանց կողմից: Տեղամասերից մեկում որոշ ընտրողներ, մուտք գործելով քվեարկության սենյակ, բարևել են «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձին, ով կարճատև շփումից հետո ձեռքի շարժումով տվյալ ընտրողներին հրավիրել է քվեարկության: Մյուս տեղամասում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձը պարբերաբար ուղղորդել է ընտրողներին տեղամաս, շուրջ 5-6 անգամ՝ ընդհանուր առմամբ 15 անձ: Անձանց ուղեկցելով տեղամաս՝ վստահված անձը հետևել է, որպեսզի նրանք քվեարկեն և նրանց հետ դուրս է եկել տեղամասից: Երկու դեպքերում էլ տեղամասային հանձնաժողովները որևէ գործողություն չեն կատարել, իսկ դիտորդի գնահատականները գրանցամատյանում չեն գրանցվել:

2.2.6 Ընտրողին օգնելու կարգի պահպանում

ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, այցելու: Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է: Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:[8]

Այս համատեքստում դիտորդների կողմից արձանագրվել են նաև ընտրողին օգնելու կարգի խախտման դեպքեր՝ ընդհանուր առմամբ 46 խախտում 17 (21%) տեղամասում: Արձանագրված դեպքերի հիմնական մասը վերաբերել է առանց գրանցամատյանում գրանցման ընտրողների օգնությանը: Իսկ տեղամասերից մեկում դիտորդներն արձանագրել են երկու դեպք, երբ օգնողները, չունենալով անձնագրեր, գրանցամատյանում գրանցվել են առանց անձնագրային տվյալները նշելու: Տվյալ դեպքերի հետ կապված հանձնաժողովի նախագահը մերժել է դիտորդի գնահատականը գրանցամատյանում գրանցելու պահանջը:

Ընտրողին օգնելու մասով ամենամեծ քանակի խնդիրներ գրանցվել են Նորք Մարաշ (16 դեպք) և Կենտրոն (5 դեպք) վարչական շրջաններում:

Մեկ այլ տեղամասում արձանագրվել է ընտրողներին մեքենայով տեղամաս տեղափոխելու 2 դեպք: Դիտորդի գնահատականը գրանցվել է գրանցամատյանում:

Ստորև պատկերված է ընտրողների ուղղորդման (ձախից) և օգնելու կարգի խախտման դեպքերի (աջից) և տեղամասերի քանակն՝ ըստ վարչական շրջանների:

[8] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 67

Պատկեր 6. Ընտրողների ուղղորդման և ընտրողին օգնելու կարգի խախտման դեպքերի քանակը և տեղամասերի քանակը



2.2.7 Կողմնակի անձանց ներկայություն

Ընտրական օրենսգիրքը հստակ նշում է, որ ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում քվեարկության սենյակում օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն ներկա գտնվելու վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները՝ վերադաս հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ: Ընտրական հանձնաժողովների նիստերը (այդ թվում՝ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստը), ինչպես նաև քվեարկության ընթացքը վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են լուսանկարել, տեսանկարահանել՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:[9]

Այնուամենայնիվ, թվով դիտորդների կողմից արձանագրվել է տեղամասային կենտրոնում կողմնակի անձանց ներկայության 5 դեպք, որոնցից 3-ը գրանցվել են հանձնաժողովի գրանցամատյանում: Նշված խախտումները հիմնականում վերաբերել են քվեարկության սենյակում անհայտ անձանց ելումուտին, կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակներով թեկնածուների, առանց վկայականի վստահված անձանց ներկայությանը:

[9] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 8, կետ 11

2.2.8 Քարոզչություն

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ նախընտրական քարոզչությունն ավարտվում է քվեարկության օրվանից մեկ օր առաջ:[10] Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով արգելվում է:[11]

Քարոզչության կանոնների խախտման մասով նախաձեռնության դիտորդները, մասնավորապես, արձանագրել են՝

- անուղղակի կամ «չգիտակցված» քարոզչություն, որոնք հիմնականում վերաբերել են «դուխով» գրառում պարունակող շապիկներով կամ գլխարկներով տեղամասային կենտրոն մուտք գործելուն,
- 50 մ շառավղով սյուներին փակցված՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության և «Իմ քայլը» դաշինքի քարոզչանյութեր:

2.2.9 Ոստիկանության անգործություն

Համաձայն ընտրական օրենսդրության՝ ոստիկանությունը ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում է ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում:[12]

Ի տարբերություն նախորդ տարվա ընտրությունների, Երևանի ավագանու ընտրությունների դեպքում արձանագրվել է ընդամենը 3 դեպք Նոր Նորք վարչական շրջանի թվով 2 տեղամասերում (3%), երբ ոստիկանությունը անգործության է մատնվել և չի արձագանքել տեղամասից դուրս կուտակումներին և հասարակական կարգի այլ խախտումներին:

2.3 Քվեարկության արդյունքների ամփոփում

Դիտարկված տեղամասերում քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքը եղել է հանգիստ առանց կոպիտ խախտումների, որոնք կարող էին էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա:

[10] Նույնը, հոդված 19, կետ 1
[11] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19, կետ 1
[12] Նույնը, հոդված 55

2.3.1 Ամփոփման ընթացակարգ

Ամփոփման ընթացակարգերի մասով արձանագրված հիմնական խնդիրները՝ թվով 19-ը, կապված են եղել փակման կամ հաշվարկի ընթացքում տեղամասային հանձնաժողովների կողմից ընթացակարգերի չպահպանման և քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ազատ ելումուտի և կողմնակի անձանց ներկայության հետ: Արձանագրված խնդիրներից 3-ի դեպքում տեղամասային հանձնաժողովը հրաժարվել է գրանցամատյանում գրանցել դիտորդների գնահատականը:

Փակման ընթացակարգ

Տեղամասերի 4%-ում արձանագրվել են փակման ընթացակարգի խախտումներ հանձնաժողովի կողմից՝ Նոր Նորք և Արաբկիր վարչական շրջաններում:

Հաշվարկի ընթացակարգ

Տեղամասերի 8%-ում դիտարկվել են հաշվարկի ընթացակարգի խախտումներ տեղամասային հանձնաժողովի կողմից՝ Երեբունի, Կենտրոն, Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն և Նուբարաշեն վարչական շրջաններում:

Կողմնակի անձանց ներկայություն

Տեղամասերի 4%-ում դիտարկվել է կողմնակի անձանց ներկայություն՝ Նոր Նորք, Երեբունի և Արաբկիր վարչական շրջաններում:

2.4 Էական խախտումներ և բողոքարկում

Քվեարկության օրվա դիտարկման ընթացքում առաքելության կողմից արձանագրվել է թվով 59 էական խախտում, որոնցից 11-ը՝ քվեարկության նախապատրաստման, 45-ը՝ քվեարկության, իսկ 3-ը՝ քվեարկության արդյունքների ամփոփման փուլում:

Դիտորդների կողմից արձանագրված խախտումների, ինչպես նաև դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ նախաձեռնության կողմից 2018թ. սեպտեմբերի 25-ին թիվ 1, 2, 3, 4, 6, 7, 8, 9, 10 տարածքային ընտրական հանձնաժողովներ ներկայացվել է թվով 9 դիմում-բողոք: Դրանցում խմբավորվել են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում ընդգրկված տեղամասերում արձանագրված խախտումները, որոնք վերաբերել են հետևյալ խնդիրներին՝

- տեղամասային հանձնաժողովի աշխատակարգի խախտմանը,
- ցուցակներում ընտրողների անվան դիմաց ստորագրությունների առկայությանը,
- քվեարկության գաղտնիության խախտումներին,
- քվեարկության օրը քարոզչության դեպքերին,
- ընտրողին օգնելու կարգի խախտումներին,

- քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձի կողմից օրենքով սահմանված կարգով վկայականը դիտավորությամբ տեսանելի ձևով չկրելուն,
- կուտակումներին,
- քվեարկության կարգի խախտման վերաբերյալ դիտորդի գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցելու պահանջը մերժելու դեպքերին,
- ընտրողների ուղղորդման դեպքերին,
- քվեարկության կարգի խախտման դեպքերին:

Ներկայացված դիմում-բողոքների վերաբերյալ բոլոր 9 տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումներ: Թիվ 2, 4, 8, 9 տարածքային հանձնաժողովների կողմից նաև մերժվել են դիտորդների դիմում-բողոքները, այն մասով, որոնք վերաբերել են վերջիններիս սուբյեկտիվ իրավունքների խախտմանը: «Ականատես»-ի ներկայացուցիչները ներկա են գտնվել տարածքային ընտրական հանձնաժողովների բոլոր նիստերին, որոնք վերջիններիս կողմից հիմնականում գնահատվել են որպես միակողմանի և ձևական բնույթ կրող գործընթացներ:

Թիվ 1 և 4 տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացված դիմում-բողոքների հիման վրա արձանագրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելու դեպքեր (դիտորդի գնահատականը արձանագրելու պահանջի մերժման հիմքով) և որոշում է կայացվել միջնորդել ԿԸՀ՝ ուժը կորցրած ճանաչել համապատասխանաբար թիվ 1/15 և 4/34 տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները:

Թիվ 2 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից գնահատվել է հանձնաժողովի քարտուղարի կողմից արձանագրությունների օրինակները ջնջումներով լրացնելու դեպքը և որոշում է կայացվել միջնորդել ԿԸՀ՝ ուժը կորցրած ճանաչելու թիվ 2/16 տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

Թիվ 1, 2, 3, 4, 6, 7, 8, 9, 10 տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից կայացված որոշումները բողոքարկվել են ԿԸՀ: ԿԸՀ որոշումներով ներկայացված բոլոր դիմում-բողոքները մերժվել են և տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները թողնվել են անփոփոխ:

ԿԸՀ-ի 2018թ. հոկտեմբերի 17-ի թիվ 84-Ա և թիվ 82-որոշումների դեմ 2018թ. հոկտեմբերի 20-ին ՀՀ վարչական դատարան է ներկայացվել երկու հայցադիմում, որոնք դատարանի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Հաշվի առնելով դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների իրավասությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում դիմելու վարչական դատարան՝ 2018 թ. սեպտեմբերի 26-ին «Ականատես» նախաձեռնության անդամ

կազմակերպությունների կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել 7 հայցադիմում՝ վարչական պատասխանատվության ենթարկելու խախտումների համար պատասխանատու անձանց: Դիմումներից 5-ը վերաբերել են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելուն[13] և 1-ը՝ քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձի կողմից օրենքով սահմանված կարգով իր վկայականը դիտավորությամբ տեսանելի ձևով չկրելուն:[14] Մեկ դիմում ներկայացվել է ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ ՀՀ ոստիկանության անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, որը դրսևորվել է թիվ 9/48 տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղող խմբերով հավաքվելուն առնչվող օրենսդրական արգելքի պահպանման ուղղությամբ անհրաժեշտ գործողությունների իրականացումից ձեռնպահ մնալով:[15] Բոլոր 7 հայցադիմումները ՀՀ վարչական դատարանի որոշմամբ ընդունվել են վարույթ և նշանակվել են դատական նիստեր:

Քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձի կողմից օրենքով սահմանված կարգով իր վկայականը դիտավորությամբ տեսանելի ձևով չկրելու հիմքով ներկայացված հայցադիմումով հարուցված վարչական գործով պատասխանողի կողմից հայցվոր կազմակերպություններին է ներկայացվել հաշտության առաջարկ:

2018թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 149, 145 և 154.2-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով չորս հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ քրեական գործ հարուցելու, բազմակողմանի նախաքննություն իրականացնելու, ենթադրյալ հանցագործության կատարման և հնարավոր առնչություն ունեցող անձանց հայտնաբերելու և գործողություններին գնահատական տալու պահանջով:

Մասնավորապես, հաղորդումները վերաբերել են հետևյալ դեպքերին՝

- *Դիտորդի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դեպքին*
  Տվյալ դեպքում ժամը 19:00-ի սահմաններում քվեարկության սենյակի հարակից սենյակում հանձնաժողովի որոշ անդամներ սկսել են հաշվարկել քվեարկության կտրոնները: Տեղամասում գտնվող վստահված անձը հանձնաժողովի նախագահից խնդրել են տալ պարզաբանումներ, ինչի արդյունքում հանձնաժողովը որոշել է նիստ հրավիրել և վերջիններիս (այդ թվում նաև դիտորդին) հեռացնել ընտրական տեղամասից՝ քվեարկության բնականոն ընթացքը խաթարելու պատճառաբանությամբ:
- *Ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով՝ ընտրողին թեկնածուներից որևէ մեկի օգտին կամ դեմ քվեարկելուն, հարկադրելու դեպքերին*
  Այս դեպքում տեղամասում տեղի է ունեցել ընտրողներին օգնելու կարգի խախտում՝ զուգորդված վստահված անձի ուղղորդմամբ, մասնավորապես վստահված անձի անմիջական ցուցումների արդյունքում տարեց կինն իր թոռան հետ առանց տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցվելու քվեախցիկում կատարել է

[13] «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 40.6
[14] Նույնը, հոդված 40.15-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով, այն է
[15] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 22, կետ 3

ընտրություն: Մեկ այլ դեպքում կուսակցության ավագանու թեկնածուն ավտոմեքենայով տեղամաս է բերել մի քանի ընտրողների, այնուհետև մուտք է գործել տեղամասային կենտրոն: Վերջինս ընտրողների է բերել տեղամաս ևս մեկ անգամ:

- *Քվեարկողի կողմից բաց՝ երրորդ անձանց համար քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելու, ինչպես նաև շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանման դեպքին*
  Մասնավորապես, քվեարկողը լուսանկարել է իր քվեաթերթիկը քվեախցիկում՝ բացահայտելով նպատակը:

Բոլոր հաղորդումներով նախապատրաստվել են նյութեր. մեկ գործով քրեական գործ հարուցելը մերժվել է և տվյալ որոշումը բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն, իսկ մնացած երեք հաղորդումներով դեռևս որոշում չի ստացվել:

5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քվեարկության օրը ընտրողների կամքի ազատ արտահայտման համար անհրաժեշտ նախադրյալներ և պատշաճ ընտրական գործընթացները բարելավելու նպատակով անհրաժեշտ է նախաձեռներ հետևյալ փոփոխությունները՝

5.1 Ընտրողների ցուցակների ճշգրտում

1. Պետք է շարունակել ընտրողների ցուցակներին առնչվող խնդիրների լուծմանն ուղղված քայլերը: Մասնավորապես՝ անհրաժեշտ է վերանայել ընտրողի ռեգիստրի ձևավորման մեխանիզմը՝ տարանջատելով ՀՀ-ում և երկրից դուրս գտնվող քաղաքացիներին: Այս առումով անհրաժեշտ է նաև մշակել իրավական մեխանիզմներ Հայաստանից երկար ժամանակ բացակայող ընտրողներին ՀՀ ընտրողների ցուցակներից ժամանակավորապես հանելու նպատակով: Օրինակ՝ կարելի է ընտրողների ցուցակները մաքրել՝ հիմք ընդունելով ընտրողների անձնագրերի վավերականության ժամկետը: Դա հնարավորություն կընձեռի ցուցակներից հեռացնել այն քաղաքացիներին, ում անձնագրի վավերականության ժամկետն ավարտվել է:

2. Ընտրողների ցուցակների շարունակական բարելավումն ապահովելու նպատակով չափազանց կարևոր է նաև քաղաքացիների մասնակցությունը ցուցակների ստուգման և ճշգրտման գործընթացում: Անհրաժեշտ է կազմակերպել ընտրողների իրազեկման և կրթության շարունակական արշավներ ընտրողների ցուցակների կարևորության և ճշգրտման գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև խթանել քաղաքացիների մասնակցությունը ցուցակների բարելավման գործընթացին:

5.2 Դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների ընդլայնում

3. Պետք է չեղարկել 2016 թ. ՀՀ ընտրական օրենսգրքով ներմուծված՝ դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքները սահմանափակող կարգավորումները, մասնավորապես, վերացնելով վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող լրատվամիջոցների համար խտրական արտոնությունները, ՁԼՄ ներկայացուցիչներին և դիտորդներին տեղամասից դուրս հանելու հիմքերն ու կարգը:
4. Անհրաժեշտ է վերանայել դիտորդների հավատարմագրման համակարգը՝ այն դարձնելով ավելի քիչ ժամանակատար: Միևնույն ժամանակ կարևոր է դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիմումներ ներկայացրած կազմակերպությունների տվյալների և դիտորդների ցանկերի ստուգումը ՀՀ ԿԸՀ կողմից դիտորդների, ՁԼՄ ներկայացուցիչների անունների հնարավոր համընկնումները բացահայտելու և վերացնելու նպատակով: Անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքով ընդլայնել դիտորդների հավատարմագրման մասին դիմումը մերժելու հիմքերի ցանկը՝ նախատեսելով նաև թեկնածուին կամ կուսակցությանը դիտորդական կազմակերպության կողմից աջակցելու վերաբերյալ հիմքը, ինչպես նաև Ընտրական օրենսգրքով սահմանել հավատարմագրման փուլից հետո որևէ թեկնածուին կամ կուսակցությանը աջակցելու դեպքում կազմակերպությանը դիտորդական առաքելության իրավունքից զրկելու հիմքերը, դրանք բացահայտելու մեխանիզմները և

ընթացակարգերը: Դա հնարավորություն կընձեռի խուսափելու կեղծ կամ քաղաքական տեսանկյունից կողմնակալ դիտորդական առաքելություններ գրանցելուց, որոնք վտանգում են դիտորդության անաչառության և անկողմնակալության սկզբունքները:

5.3 Ընտրական հանձնաժողովների անդամների աշխատանքի որակի բարելավում

5. Հաշվի առնելով ընտրությունների ընթացքում խախտումների ուղիղ կապը տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների, մասնավորապես նախագահի ընտրական ընթացակարգերի իմացության ցածր մակարդակի հետ՝ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հավաքագրման, վերապատրաստման, թեստավորման, ինչպես նաև որակավորման վկայականների տրամադրման գործընթացներին:
6. Առաջարկվում է ԿԸՀ-ին հետևել տարածքային ընտրական հանձնաժողովների կազմի՝ նախկինում դրսևորված վարքագծին և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընտրական օրենսդրության կոպիտ խախտումներ թույլ տված անդամներին փոխարինելու, ինչպես նաև հետագայում ընտրական հանձնաժողովների աշխատանքներում ներգրավվածությունը կանխելու նպատակով:
7. Տարածքային ընտրական հանձնաժողովների մակարդակում տեղեկատվության հասանելիության և հանձնաժողովների գործունեության արդյունավետ դիտարկման և գնահատման նպատակով անհրաժեշտ է տարածքային հանձնաժողովներին տրամադրել տեխնիկական և հաղորդակցության միջոցներ (ինտերնետային կայք, նիստերի հեռարձակում, բողոքներ ներկայացնելու էլեկտրոնային հարթակ և այլն):

5.4 Քվեարկության գործընթացի բարելավում

8. Հարկավոր է ձեռնարկել գործուն քայլեր ապահովելու սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների կողմից քվեարկությանը մասնակցելու հնարավորությունը:
9. Օրենսդրությամբ սահմանված կարգի խախտման դեպքերում գրանցամատյանում հանձնաժողովի անդամի, վստահված անձի և դիտորդի գնահատականն արձանագրելու պահանջ ներկայացնելու իրավունքը[16] հարկավոր է տարածել ինչպես քվեարկության, այնպես էլ նախապատրաստման և արդյունքների ամփոփման փուլերի վրա:
10. Օրենսդրությամբ սահմանված կարգի խախտման դեպքերում հանձնաժողովի անդամի, վստահված անձի և դիտորդի գնահատականը գրանցելու պահանջի իրավունք և նրանց կողմից գրանցամատյանում գրառում կատարելու պրակտիկա ներմուծել նաև տարածքային ընտրական հանձնաժողովներում:

5.5 Բողոքարկման գործընթացների արդյունավետության երաշխավորում

11. Անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքում կատարել լրացում՝ ճանաչելով դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը դիտորդի կարգավիճակից բխող իրավունքների խախտման վերաբերյալ գործերով: Դիտորդական կազմակերպությունները,

[16] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 67, մաս 14

որոնք ստանձնում են պատասխանատվություն իրենց դիտորդների համար, պետք է նաև իրավունք ունենան դատական կարգով պաշտպանել նրանց ոտնահարված իրավունքները:

12. Անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանել դիտորդի և դիտորդական կազմակերպությունների կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը:
13. Պետք է վերանայել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված բողոքարկման և ընտրական հանձնաժողովների կողմից որոշումների կայացման ժամկետներին վերաբերող իրավակարգավորումները,[17] որոնց ուժով փաստացի բացառվում է ՀՀ ԿԸՀ կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքների քննությունը:
14. Անհրաժեշտ է վերացնել ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների համար դատարան հայց ներկայացնելու դեպքում պետական տուրքի վճարման պահանջը՝ դյուրինացնելու ընտրությունների օրինականության նկատմամբ հանրային վերահսկողությունը:
15. Հարկավոր է ստեղծել բողոքարկման գործուն ընթացակարգ՝ ապահովելով դիմում-բողոքներ և հաղորդումներ ներկայացնելու ժամկետների երկարաձգում, դիմում-բողոքներ ներկայացնելու ձևաչափի արդյունավետություն՝ մասնավորապես էլեկտրոնային տարբերակով դիմում-բողոքները ներկայացնելու միջոցով, բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների ցանկի ընդլայնում, արդյունքների վերջնական հաստատման ժամկետների հետաձգում՝ մինչև վեճերի արդյունավետ լուծումը և ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանությունը:

[17] ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քվեարկության օրվանից սկսած՝ մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18:00-ն, ստացված դիմումներին տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովները պատասխանում, իսկ ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը: Երևանի ավագանու ընտրությունների դեպքում, ԱԺ ընտրությունների դեպքում տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից որոշումները կայացվում են մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ:

4. ՎԵՐՋԱԲԱՆ

Սույն զեկույցում վերհանված մի շարք խնդիրների լուծումն անհրաժեշտություն է առաջացնում փոխել ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ պահպանելով դրանում առկա որոշ դրական իրավակարգավորումները: Դրան զուգահեռ անհրաժեշտ է իրավասու կառույցների համատեղ ուժերով ձեռնամուխ լինել իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը (օրինակ՝ ապահովելու թեքահարթակները, շտկելու ընտրողների ցուցակները և այլն):

«Ականատես»-ը կարևորում է, որ նոր ընտրական օրենսգիրքը մշակվի բոլոր շահագրգիռ կողմերի ներկայացուցչական խմբի կողմից և առանձին հարցերի շուրջ շահագրգիռ կողմերի հետ թեմատիկ քննարկումների արդյունքում:

«Ականատես» դիտորդական առաքելությունը լիահույս է, որ ընտրությունների դիտարկման արդյունքում արձանագրված խնդիրները և դրանց ուղղությամբ ներկայացվող լուծումները քննարկման առարկա կդառնան ՀՀ կառավարությունում և ՀՀ Ազգային ժողովում, ինչպես նաև դիտորդական հասարակական կազմակերպությունների և փորձագիտական շրջանակներում: